

Մ. Ն. Հակոբյան

«ԱՂԲՅՈՒՐ» ԱՄՍԱԳԻՐԸ

(Ընդհանուր ակնարկ)

Թեև հայ մամուլի պատմությունը սկզբնավորվում է 18-րդ դարի վերջերից, հայ մանկական մամուլի հիմքը դրվել է համեմատաբար ուշ՝ XIX դարի 80-ական թվականներին: Դա մի ժամանակաշրջան էր, երբ հայ իրականությունը, այլ հարցերի հետ միասին, հրամայաբար առաջ էր քաշել նաև մանկական հատուկ մամուլ ստեղծելու կենսական պահանջը: 1883 թ. Թրիխտիում հիմնադրվեց և լույս ընծայվեց «Աղբյուր» մանկական ամսագիրը:

«Աղբյուր» մանկական ամսագրի լայն ընծայման մասին առաջին անգամ հայտարարություն է տպագրվել Տ. Նազարյանի հրատարակությամբ 1882 թ. լույս տեսած Կ. Մելիք-Շահնազարյանի «Ղըլքէ կնանոց պընը-փէշակը» գրքույկի հավելվածում: Այդ հայտարարության մեջ ասված է, որ ամսագիրը կհրատարակվի որպես Տ. Նազարյանի հրատարակությունների երկրորդ սերիա, որ այն լույս կտեսնի պատկերազարդ և ամեն ամիս: Ըստ հայտարարության նրա առաջին համարը նախատեսվում էր հրատարակել հունվարին (1883 թ.):

«Աղբյուր»-ի առաջին համարը տպագրվել է Մովսես Վարդանյանի տպարանում: Այդ համարի բաժանորդների թիվը շատ փոքր էր՝ ընդամենը 28 մարդ (մի այլ վկայությամբ՝ 30): «Աղբյուր»-ն առաջին մանկական ամսագիրըն էր ոչ միայն Արևելյան Հայաստանում, այլ նաև ամբողջ Անդրկովկասում: Նրա կազմակերպման ու հրատարակման գործին ակտիվ մասնակցություն են ունեցել նաև այդ տարիներին Թրիխտիում գտնվող ռուս գրող-մանկավարժ Սոլովյով-Նեսմեկովը, ինչպես նաև վրացի և ադրբեջանցի մի շարք ընկերներ: Կիևի և Կազանի համալսարանների նախկին ուսանող Գ. Միրզոյանի և ռուս գրող-մանկավարժի ակտիվ մասնակցությունն ու աշխատակցությունը «Աղբյուր»-ին, մանավանդ ամսագրի մի շարք նյութերը, իրավունք են տալիս ենթադրելու, որ ամսագրի ծրագիրը մշակելու ժամանակ հաշվի է առնվել ռուսական մանկական ժուռնալիստիկայի երկարամյա և հարուստ փորձը:

Ի՞նչ սկզբունքներով էր առաջնորդվում «Աղբյուր» մանկական ամսագիրը:

«Աղբյուր»-ի ծրագիրը շարադրվել է ամսագրի առաջին համարի հավելվածում՝ «Խմբագրության կողմից» հոլովածում և ուրիշ նյութերում, որոնք գերազանցապես պատկանում են Գյուրգիսի Միրզոյանի (Գարո) գրչին: Այդ խմբագրականը, ինչպես նաև, այսպես ասած, ծրագրային մյուս նյութերը, գրե-

¹ Առաջին համարն անորակ տպագրված լինելու և շատ վրիպակներ պարունակելու պատճառով ամբողջությամբ նորից է տպագրվել, բայց արդեն Հովհ. Մարտիրոսյանի հաբուստ տպարանում. «Սրկրորդ անգամ միևնույն համարի տպագրելը մեր սրբազան պարտքը համարեցինք», — այդ առթիվ գրում է Տ. Նազարյանը ամսագրի 3-րդ համարում:

² Ռուսերեն լեզվով առաջին մանկական ամսագիրը («Летское чтение») գրող Ն. Կարամզինի ակտիվ մասնակցությամբ հրատարակել է Ն. Ի. Նովիկովը՝ 1785 թ. սկսած: Տեղեկագիր 2—3

թե առանց որևէ փոփոխություն, արտատպվել են 25 տարի հետո՝ 1908 թ. ամսագրի № 2-ում՝ «Դեպի ուր» վերնագրով: Հենց միայն այս փաստը վկայում է այն մասին, որ «Աղբյուր»-ն ունեցել է հաստատուն, մեկընդմիջտ որոշված սկզբունքներ, որոնց նա չի դավաճանել իր բավականաչափ երկար կյանքի ընթացքում:

Անդրադառնանք այդ սկզբունքներից մի քանիսին:

Ոռոտելով մատաղ սերնդին կրթելու և դաստիարակելու անհրաժեշտություն մասին, «Աղբյուր»-ը իր առաջին համարի հավելվածում մատնանշում է, որ օր-օրի վրա խիստ զգալի է դառնում այնպիսի մի հրատարակչության անհրաժեշտությունը, որն իրեն նպատակ դնի առաջնորդել մատաղ հասարակությունները, ցանել նրանց մեջ ազնիվ մարդ լինելու սերմեր, զարթեցնել և զարգացնել նրանց մեջ ազնիվ, բարի ձգտումներ և արմատախիլ անել չար ու ֆիսասակար որոմն...»: Տիգրան Նազարյանը և նրա համախոհները, ձեռնամուխ լինելով «Աղբյուր»-ի հրատարակմանը, նպատակ էին դրել ստեղծել մի այնպիսի պարբերական, որը սպասարկի միայն մանուկներին, ընթերցողներին մեջ դաստիարակի բնավորության ազնիվ գծեր, նրանց դարձնի հասարակությանն օգտակար մարդիկ: «Աղբյուր»-ի նպատակն է, — գրում է երիտասարդ հրատարակիչ-խմբագիրը նույն տեղում, — հայ սերնդի մեջ զարթեցնել պատվասիրության զգացմունքները, զարգացնել հայ երեխայի մեջ սեր դեպի իր շրջապատողները, բարի նախանձ դեպի ամեն վսեմը, ազնիվը և ատելություն դեպի ամեն ֆիսասակարն ու չարը...»:

Այսպիսով, նորաստեղծ ամսագրի խմբագրությունն իր առջև դաստիարակական խնդիրներ է դնում:

Աճող սերնդին դաստիարակելու համար մանկական ամսագիրը միայն մի միջոց ուներ՝ ընթերցանության լավ, նպատակասլաց նյութ տալ երեխաներին: Մանկական ընթերցանությունը, ըստ «Աղբյուր»-ի, մանուկներին զարգացնելու ամենագործող միջոցներից մեկն է: Ելնելով դրանից, «Աղբյուր»-ը խոստանում էր իր մանուկ ընթերցողներին տալ այնպիսի ստեղծագործություններ, որոնք տոտոգելով մեր փառքի՛կ և քաղցր ընթերցողների հոգին և սրտերը՝ պարարտ հող պետք է պատրաստեն ապագայում պտղաբեր սերմեր աճեցնելու մարդկությանը...»:

Բայց որտեղից պետք է սնվեր «Աղբյուր»-ը, ի՞նչ ստեղծագործություններ նա պետք է տպագրեր: Այս հարցում ես «Աղբյուր»-ն ունի իր որոշակի, հաստատուն տեսակետները:

«Աղբյուր»-ի տեղերը, — սոված է վերահիշյալ խմբագրականում, — հոսում են ժողովրդական հեքիաթներից, զրույցներից, խաղերից, ավանդություններից...»: Ուրեմն մանկական ամսագրի նպատակն է լինելու ամենից առաջ տեղ տալ ժողովրդական ստեղծագործություններին, դրանց ոգով դաստիարակել մանուկներին: «Աղբյուր»-ը լավ է հասկացել, թե ինչ գանձեր են պարունակում ժողովրդական հեքիաթները: Բնոր հեքիաթները, — գրում է «Աղբյուր»-ը իր 1908 թ. երկրորդ համարում, — մեր առջև բաց են անում երեակայության անհուն ծով, անվերջ հրաշքներ ու սքանչելիքներ և մարդկային խելքի անընդհատ ստեղծագործություններ... Հեքիաթների մեջ են հավաքված մի ժո-

² «Աղբյուր», 1983, հավելված № 1, էջ 11

դովորդի, մի աղդի առաջնական-պատմական, բարոյական, կրոնական ու գիտական հայացքները»⁴։

Հեքիաթներին զուգահեռ, մանկական ամսագիրը նպատակ է դնում լայն տեղ տալ նաև առականներին։ Ժողովրդական գրույցներից ընտրվում են անպիսիները, որոնք պարզ են, հասկանալի և նպաստում են այն լսանին, որ «մանուկի զարգացումն ընթանա բնական ճանապարհով»։

Բայց ժողովրդական բանահյուսությունում բավարարվելը քիչ էր։ Մանկական ամսագիրը պետք է նպաստեր մանկական գրականության զարգացմանը, ցույց տար այն ուղիները, որոնցով պետք է ընթանան մանկական գրողներն ու լսանատեղիները։ Եվ «Աղբյուր»-ն առաջադրում է իր պահանջները մանկական գրականության նկատմամբ, իր խոսքն ասում հրապարակում եղած ստեղծագործությունների մասին։ Մանկական գրականության նպատակը, ըստ «Աղբյուր»-ի, պետք է լինի ոչ թե երեխաներին բարոյականություն տալու և սովորեցնելը, այլ այն զարգացնելը։ Իսկ դրան կարելի է հասնել այն դեպքում, եթե մանկական ընթերցանության նյութը գրած կլինի պարզ, մանուկներին մատչելի լեզվով, ...երբ հերոսները շինծու տիկիներ չեն լինի։ ...Կեղծավորությունը և փարիսեցիությունը չպետք է տիրապետի մանկական գրականության մեջ»⁵։

Ի պատիվ «Աղբյուր»-ի, պետք է նշել նաև նրա որոշակի բացասական վերաբերմունքը մանկական գրականության մեջ կրոնական հայացքներ զարգացնելու նկատմամբ։ «Մեր կարծիքով, — գրում է «Աղբյուր»-ը «Մանուկները և նրանց ընթերցանությունը հոգավածում, — մանկական գրքերը պետք է հետևեն լինեն կրոնական ձգտումներից, որովհետև այդպիսիները գրվում են նախագծված նպատակներով, որը արդեն գիրքը անպետք է դարձնում...»⁶։

Հակադրվելով երեխաներին շահամուտության ոգով դաստիարակելու փորձերին, «Աղբյուր»-ը կրքոտությամբ նկատում է. «Ո՛չ, մենք վերջապես պետք է սովորեցնենք մեր մանուկներին աշխատել, մենք պետք է զարթեցնենք նրանց մեջ սեր դեպի քրտինք, դեպի գործունեություն, թող նա սիրի իր շրջանը և չմոռանա անձնապատվությունը, թող նա ապագայում հույս դնի իր սեփական ուժերի վրա, թող նա ինքնավստահ լինի»⁷։ Երեխան պետք է ինքը հաղթահարի դժվարությունները։ Նա պետք է ոչ թե դայակի օգնությունով ման գալ սովորի, ոչ թե մտածի «հենվել ուրիշի վրա», այլ նա պետք է սեփական ուժերի գործադրմամբ ոտքի կանգնի, որպեսզի մկանները շուտ զարգանան։ Շուտով պետք է նկատել մտավոր և բարոյական զարգացման վերաբերմամբ, — եզրակացնում է «Աղբյուր»-ը։

Հատուկ պետք է մատնանշել «Աղբյուր»-ի հայացքները երեխաների բարոյական դաստիարակության վերաբերյալ։ Այդ դադարախախտումները արտահայտված են ամսագրի 1884 թ. № 8—9 հավելվածի «Մեր բարոյական զարգացումը» խմբագրական հոդվածում։ Այստեղ խնդիր է դրվում պայքարել այն ամենի դեմ, ինչ ճառաջանում է խավար տգիտությունից մի կողմից և հիմնավոր բարոյական դաստիարակության բացակայությունից մյուս կողմից։

⁴ Ն ու յ ն տ ե ղ ու մ, 1908 թ., № 2, էջ 32։

⁵ Ն ու յ ն տ ե ղ ու մ, 1884, հավելված № 3, էջ 3—4։

⁶ Ն ու յ ն տ ե ղ ու մ, էջ 3։

⁷ Ն ու յ ն տ ե ղ ու մ, 1883, հավելված № 1, էջ 6։

Ամսագիրը բարոյական ճիշտ դաստիարակությունը կապում է գիտությունների ուսուցման, կրթության, զարգացման հետ և գտնում է, որ «այնտեղ, ուր տիրում է ագիտությունը, խոսք չկա, որ չեն կարող տեղի ունենալ նաև բարոյական սկզբունքներ», քանի որ «բարոյական պրինցիպները զարգացած հասարակական կյանքի ծնունդն են»⁸։ Դնելով բարոյական կրթությունը մտավոր զարգացման հետ շաղկապելու խնդիրը, ամսագիրը խարազանում է լավ մարդը դառնալու իր ժամանակի հասկացողությունը և ընդգծում, որ իր նպատակն է «նպաստել բարոյական դաստիարակության գործին», անողոք պայքար մղել «ենդ ես»-ի դեմ և իրար միացնել «ես»-ի և «դու»-ի գաղափարները։

«Աղբյուր»-ը ցասումով է խոսում ֆեոդալար գաղափարներ քարոզող առանձին մանկական վեպիկների մասին։ Իր առաջին համարներից մեկի հավելվածում վերլուծելով «Կառնուկ» և «Աստատունիկ» թարգմանական վեպիկները, «Աղբյուր»-ը բացահայտ գալույթով նկատում է. «Այդ վեպիկների մեջ շրջում են մի կողմից բուրժուաների անշունչ ստվերները, իսկ մյուս կողմից կղերական բարերարները—ոչ մի կենդանի պատկեր, ոչ մի կենդանի խոսք... բոլորը շինծու, փքած ֆրագներ, մոլեռանդ հոգեպաշտություն՝ գերբնական ուժի վրա հիմնված անկալություններ. ամեն մի երեսի վրա հրաշքների նման անսպասելի, անբնական դեպքեր, նյութական վարձատրություններ... Սա ինչ բուրժուազական գաղափարներ են. միթե այս տեսակ մտքեր ու խոսքեր կարելի է համբերությունով կարդալ որևիցե մանկական գրվածքի մեջ...»⁹։

Հաջորդ համարներից մեկում «Աղբյուր»-ը այդ «ուրվականներին», «բուրժուազական գաղափարներին» հակադրում է Ղ. Աղայանի կերտած հերոսները, բարձր գնահատում նրա ստեղծագործությունը, մասնավորապես «Անահիտը»։ Նա գտնում է, որ Աղայանի ստեղծագործությունը պետք է դարձնել «հայ մանուկների զեղարվեստական ճաշակը զարգացնելու միջոցներից մեկը»։

Երևիսաների մեջ աշխատասիրություն, ազնվություն դաստիարակելու հետ միասին «Աղբյուր»-ը խորհուրդ է տալիս միաժամանակ սեր արթնացնել դեպի բնական գիտությունը, դեպի կենդանի բնությունը, հաճախակի ճանապարհորդել, ևրևիսաներին դաստիարակել «մեծ մարդկանց» օրինակով։ «Այսպես,—գրում է նա,—ծանոթացրեք մանուկներին ճշմարիտ, իսկական կյանքի հետ, ցույց տվեցեք նրանց, որտեղ է իսկական կյանքը... ծանոթացրեք մանուկներին անցյալի և ներկայի հետ կենդանի պատկերների մեջ, ծանոթացրեք զանազան ուժի և կամքի տեր մարդերի կյանքի հետ»¹⁰։

Մանուկներին ցույց տալ «իսկական կյանքը», նրա «փշերը և վարդերը»,—այս նշանաբանն էր գրված «Աղբյուր»-ի դրոշի վրա, և կարելի է ասել, որ նա, ընդհանուր առմամբ, հավատարիմ է մնացել այդ նշանաբանին, ձգտել է ճիշտ ուղիով տանել մանուկների դաստիարակության գործը։ Ամսագրում տպագրված հեքիաթների, պատմվածքների, բանաստեղծությունների, գրույցների, գեղարվեստական մյուս գործերի, նշանավոր մարդկանց կյանքին նվիրված նյութերի միջով կարմիր թելի պես անցնում է հենց այն գաղափարը, թե հարկավոր է, որքան կարելի է, պարզ ու ճշմարտացի ցույց տալ կյանքը, ևրև-

⁸ Ն ու յ ն տ ե գ ու մ, 1884, հավելված № 8—9, էջ 26։

⁹ Ն ու յ ն տ ե գ ու մ, 1893, հավելված № 2, էջ 18, 19։

¹⁰ Ն ու յ ն տ ե գ ու մ, 1884, հավելված № 3, էջ 31։

խաներին նախապատրաստել այդ կյանքի համար, նրա «փշերի և վարդերի» համար:

Առաջնորդվելով բավականին առողջ սկզբունքներով, «Աղբյուր»-ը բռնել է ժամանակի քննությունը: Նա 35 տարի շարունակ ճիշդ մանկան ամենալավ ընկերը, բարեկամն ու դպրոցն էր:

Երեսուներեք տարի. դա հալ պարբերական մամուլի պատմության բացառիկ երևույթներից է¹¹: Այսօր էլ, երբ չորս տասնյակ տարուց ավելի ժամանակ է անցել այն օրից, ինչ լույս է տեսել «Աղբյուր»-ի վերջին համարը, մանկական այդ ամսագիրը ակնածանք է ներշնչում: Նրա էջերում տեղ են գտել բազմաթիվ ու բազմազան մանկական վեպիկներ, զրույցներ, հեքիաթներ, ճամփորդական և կենսագրական նոթեր, բանաստեղծություններ, գիտություն ու արվեստի, կենդանիների ու թռչունների մասին գրված հոդվածներ, հետաքրքրական տեղեկություններ, զվարճալիքներ, խնդիրներ, անեկդոտներ, երգեր: Ամսագիրը պատկերազարդ էր, ձևավորվում էր պարզ և ճաշակով, տպագրվում խնամքով, բարձրորակ թղթի վրա, տեքստերը շարվում էին խոշոր, դուրընթեռնելի տառերով: Մի խոսքով, «Աղբյուր»-ը իսկական մանկական ամսագիր էր՝ այդ արտահայտություն թուփանդակ իմաստով:

Վերցնենք ամսագրի առաջին համարը: Նրա շապիկը՝ հայկական քնաշխարհի մի սքանչելի պատկերով¹², արդեն իսկ արթնացնում է ընթերցողի՝ հետաքրքրությունը: Առաջին համարը բացվում է 'Ղ. Աղայանի «Շնորհավոր Նոր տարի» բանաստեղծությամբ: Նրանում տեղ են գտել «Ուրիշի լույսը քեզ բուն չի դառնա» թարգմանական պատմվածքը, երկու հեքիաթներ, ապա Բաֆֆու կատարած փոխադրությունը Տուրգենևից¹³, «Այլ և այլք» բաժնում տպագրված են մի շարք, այսպես ասած, թեթև ընթերցանության նյութեր, իսկ «Զվարճալիք» բաժինը կազմված է հանելուկներից, շուտասուկներից, կատակներից, հետաքրքրական առաջադրանքներից, խնդիրներից, ռեբուսներից: Ամսագրի վերջում տպագրված է «Միրուն թիթեռ ինձ ասա» հանրահայտ երգը՝ երգչական սիստեմի ձայնանիշներով:

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, ամսագրի առաջին համարը բավականաչափ բազմազան է իր ընդգրկումով ու նյութի առատությամբ: Նրանում երիտասարդ, ընթերցողներին դեռևս անհայտ հեղինակների կողքին տեղ են գտել նաև Աղայանն ու Բաֆֆին: Այստեղ գեղարվեստական ընթերցանության նյութերից բացի, որոնք գրավում են ամսագրի երկու երրորդ մասը 30 էջը, կան նաև ժամանցի շատ նյութեր, որոնք, անշուշտ, խիստ անհրաժեշտ են մանկական ամսագրի համար: Նյութերի սկզբնատառերը և վերջնա-

¹¹ Գ. Լ. և Ո. յ ա ն ի տվյալներով միայն 36 պարբերական է երեսուն տարուց ավելի հրատարակվել:

¹² «Աղբյուր»-ի շապիկանկարը առաջին համարից մինչև վերջինը մնացել է անփոփոխ: Այդ նկարը պատկանում է ռուսական «РОДНИК» ամսագրի նկարիչ Կարազինի վրձինին: Նկարիչն այդ կտավը ստեղծելիս հիմք է ընդունել Բաֆֆու «Չարաբաղում կատարած ճանապարհորդական նյութերի այն հատվածը, որը «Ջրաբերդ» վերնագրով տպագրվել է ամսագրի 1883 թվականի երկրորդ համարում: «Աղբյուր»-ի հակառակորդները, հարձակումներ գործելով խմբագրության դեմ, մեծ գրողի այդ հույսկապ բնանկարը համարել են «անբարոյականացնող»:

¹³ Եթե չենք սխալվում, սա ռուս գրողի ստեղծագործություններից կատարված առաջին թարգմանությունն է հայերեն:

նկարները, որոնք աշխուժություն են հաղորդում ամսագրին, կատարված են բարձր ճաշակով:

Ընթերցանությունն առատ, խնամքով ընտրված և նպատակասլաց նյութեր, անվանի բանաստեղծների և գրողների մասնակցություն, ժողովրդական բանաստեղծյան նմուշներ, ժամանցի նյութեր, ճաշակով տպագրություն և պատկերադարձում, — ահա ինչն է բնորոշ «Աղբյուր»-ի առաջին համարներին: Այդ հատկանիշները բնորոշ են նաև «Աղբյուր»-ի հետագա գրեթե բոլոր տարիների համարներին՝ մասնավորապես ամսագրի գոյությունն առաջին կեսին:

Ահա մի քանի փաստեր «Աղբյուր»-ի առաջին տարվա մասին: Լույս տեսած 12 համարներում տպագրվել են մոտ երկու տասնյակ բանաստեղծություններ և նույնքան էլ պատմվածքներ, ընթերցանության շատ այլ նյութեր: Դրանց հեղինակներն են Ղ. Աղայանը, Բաֆին, Կ. Մելիք-Մահապարյանը, Ա. Մեհրաբյանը (Սրինգ), Վ. Փափազյանը, Գ. Բարխուդարյանը, Մ. Փամփուխյանը, Ս. Քամալյանը և ուրիշներ: «Աղբյուր»-ի առաջին տարվա ինն համարներում շարունակաբար տպագրվել է «Փայտաշեն խճիթից» սպիտակ տուներ՝ վիպակը, որն անդերևից փոխադրել են Ն. Տեր-Ավետիսյանը և Լ. Մելիք-Աղամյանը: Վիպակի նպատակն է ընթերցողների մեջ աշխատասիրություն և նպատակասլացություն դաստիարակել: Առաջին տարվա ընթացքում «Աղբյուր»-ի յոթը համարներում լույս են տեսել ժողովրդական հեքիաթներ, առասպելներ ու գրույցներ:

1883 թ. ընթացքում «Աղբյուր»-ը հրատարակել է ուսական, վրացական և անգլիական ժողովրդական հեքիաթներ, այլ լեզուներից արված մի շարք փոխադրություններ, ինչպես նաև Տուրգենևից, Մոլոտով-Նեմովից, Գարշինից¹⁴ և Ալֆոնս Էսկիրայից արված թարգմանություններ: Ամսագրին առաջին տարում, բացի գեղարվեստական ընթերցանության նյութերի բաժնից, ուներ նաև հետևյալ բաժինները՝ «Այլ և այլք», «Զվարճալիքներ», «Գիտություն և արվեստ», «Հետաքրքիր տեղեկություններ», «Ուսոն լուրեր», «Աղբյուր»-ի պատասխանները, «Հայտարարություններ»: Հետագա տարիներին «Աղբյուր»-ի բաժիններն ավելի բազմազան են դարձել:

«Աղբյուր»-ը միշտ հրատարակել և զխավորապես խմբագրել է նրա ստեղծողը՝ Տիգրան Նազարյանը¹⁵: Բայց առանձին ժամանակաշրջաններում և առանձին համարների խմբագիրները եղել են զանազան մարդիկ: Առաջին երկուս ու կես տարում «Աղբյուր»-ի խմբագիրը և ամբողջ գործը կազմակերպողը փաստորեն եղել է Գարրիել Միրզոյանը (Գարո): Ահա թե ինչ է ասվում այդ մասին Նար-Դոսի աշխատակցությամբ 1908 թ. լույս տեսած մի գրքուլիում, որը նվիրված է ամսագրի 25-ամյա հոբելյանին. «Տիգրան Նազարյանը... խմբագրական գործը լիովին վստահացել էր Գարոյին: Դարոն էր ընտրում տպագրվելիք նյութերը, նա էր վարում «Աղբյուր»-ի Բ. բաժինը, առհասարակ նա էր ուղղություն տալիս ամսագրին, և այդ գործում զարմանալի սեր, եռանդ և հոտառություն էր ցույց տալիս»:

¹⁴ Վ. Գարշինի «Attalea princeps» պատմվածքը տպագրվել է «Աղբյուր»-ի 1883 թ. № 7-ում (էջ 243—254): Սա ուսուցիչական թարգմանություն է հայերեն:

¹⁵ Տ. Նազարյանի հրատարակչական-ժողովրդական լայն գործունեությունը առանձին ուսումնասիրության թեմա է:

¹⁶ «25-ամյակ «Աղբյուր» մանկական ամսագրի», Թիֆլիս, 1908, էջ 48:

Գարբրիել Միրզոյանը, դատելով «Աղբյուր»-ում տպագրված նրա հոդվածներից, բախականաչափ զարգացած, առաջադիմական հայացքներ ունեցող անձնավորություն էր: Նա տոգորված էր վաթսուենական թվականների զաղափարներով ու ձգտումներով, հենվում էր ոռւս ուսուցիչոն-դեմոկրատների հայացքների վրա: Այս բանի լավագույն ապացույցն է թեկուզ «Աղբյուր»-ի 1884 թ. № 3 հավելվածում տպագրված «Մանուկները և նրանց ընթերցանությունը» վերնագրով հոդվածը՝ Վ. Գ. Բելինսկուց բերված ընդարձակ բնագրանով: Այս անստորագիր հոդվածի համադրումը Գ. Միրզոյանի (Գարո) հոդվածների հետ բերում է այն եզրակացություն, որ նրա հեղինակը նույն անձնավորությունն է:

Տարբեր ժամանակներում «Աղբյուր»-ի խմբագրի պարտականությունները, մերթ մեկ կամ երկու ամսով, մերթ համեմատաբար երկար ժամկետներով, դրված են եղել Ղ. Աղայանի, Շիրվանզադեի, Ավ. Արասխանյանի, Կ. Մարտիրոսյանի, Գ. Տեր-Գրիգորյանի, Դ. Լիսիցյանի, Ա. Շիյանի և ուրիշների վրա:

«Աղբյուր»-ի ժամանակավոր խմբագիրների շարքից պետք է առանձնացնել Ղ. Աղայանին, որը լուրջ ավանդ ունի «Աղբյուր»-ի հրատարակման, տարածման, նրա հեղինակության բարձրացման գործում: «Աղբյուր»-ին մշտապես աշխատակցելու հրավերը Ղ. Աղայանը առաջին անգամ ստացել է 1884 թ. Բալց մինչ այդ էլ նա պարբերաբար հանդես էր գալիս «Աղբյուր»-ում, տպագրում բանաստեղծություններ, հեքիաթներ, զրույցներ, ուսուցիչից կատարված թարգմանություններ, փոխադրություններ, հոդվածներ: Մշտապես աշխատակցելու հրավեր ստանալուց հետո Աղայանը դառնում է «Աղբյուր»-ի ոգին: Նա ամսագրում տպագրված գեղարվեստական երկերում և մանավանդ ամսագրի հավելվածներում¹⁷ լույս ընծայած հոդվածներում արտահայտում էր իր դեմոկրատական հայացքները:

«Աղբյուր»-ին աշխատակցելու ժամանակաշրջանում Աղայանը գրում է իր մանկական ընտիր գրվածքներից մի քանիսը՝ «Արեգնազան»-ը, «Տորք Անդեղը» և այլն, որոնք առաջին անգամ տպագրվում են «Աղբյուր»-ում: Մատնանշելով այն տարիները, երբ աշխատակցում էր «Աղբյուր»-ին, Ղ. Աղայանը հետագայում գրել է. «Աղբյուր»-ի խմբագրատանն իմ գրիչն ավելի բեղմնավոր եղավ¹⁸: Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ իրոք նա հաճախակի է հանդես եկել «Աղբյուր»-ում, իր իսկ խոսքերով ասած, այնտեղ «անկախ և ազատ ասպարեզ ուներ»¹⁹: Ոչ լրիվ տվյալներով 1883 թ. մինչև 1890 թ. «Աղբյուր»-ում և նրա հավելվածներում Աղայանը հանդես է եկել 40 անգամ:

«Աղբյուր»-ին աշխատակցած հեղինակների ցանկը բավականաչափ պատկառելի է: Դրանց թվումն են անվանի բանաստեղծներ ու գրողներ, բանահավաքներ, թարգմանիչներ, բազմաթիվ մանկավարժներ ու գրասերներ: «Աղբյուր»-ին աշխատակցածների թվում իրենց պատվավոր տեղն են բռնում Բաֆֆին ու Ղ. Աղայանը, Գ. Բարխուդարյանն ու Հ. Հովհաննիսյանը, Ալ. Ծատուրյանն ու Պ. Պոռոյանը, Լևոն ու Փ. Վարդանյանը, Հովհաննես Խումանյանն ու Ավետիք Իսահակյանը:

¹⁷ «Աղբյուր»-ին կից պարբերաբար հրատարակվում էր ծնողների և մանկավարժների համար նախատեսված հավելված: Ամսագրի այդ երկրորդ բաժնի մասին այստեղ չի խոսվում, որովհետև այդ հավելվածների ուսումնասիրությունը կնվիրվի առանձին հոդված:

¹⁸ «Թումանյանը քննադատ», էջ 375:

¹⁹ Ղ. Աղայան, Իմ կյանքից, 1955, էջ 159:

Հենց սկզբնավորման շրջանից սկսած Բաֆֆին պաշտպանել և աջակցել է «Աղբյուր»-ին: Բաֆֆին «Աղբյուր»-ում սկսել է հանդես գալ ամսագրի առաջին իսկ համարից: Հաջորդ համարում նա մանուկներին է ներկայացնում անգլիական մի գրույցի ուսերենից կատարված լիտիագրությունը և «Ջրարերդ» հիանալի բնապատկերը: Այդ նույն տարում էլ (1883) նա հանդես է գալիս «Մշակ» ընդարձակ բանաստեղծությունամբ, որի նյութը վերցված է Պարսկաստանի և Տաճկաստանի հայերի կյանքից, ապա նաև «Ձայն տուր ով ծովակ» երգ-բանաստեղծությամբ: Ավելի բեղմնավոր մասնակցությունն առնելով հաջորդ տարում, երբ համարյա բոլոր համարներում երևում էր նրա անունը: Նա շարունակաբար տպագրում է «Պարույր Հայկազն» պատմավիպակը և Վ. Օվսյաննիկովի «Ֆիրդոսի» վերնագրով պատմագրական պատմվածքի թարգմանությունը: Հետագայում նա, բանաստեղծություններից յացի, տպագրում է մի գլուխ «Կայծեր»-ի 2-րդ հատորից (1885 թ., № 4), իսկ այնուհետև՝ Հայնից և Հյուգոյից կատարած թարգմանությունները:

«Աղբյուր»-ին ակտիվորեն մասնակցել է նաև Պ. Պոռշյանը: Ամսագրի 1888 թ. № 3-ում տպագրվել է նրա «Բարեկենդան» հեքիաթը, իսկ № 4-ում՝ «Ձատիկը»: Հաջորդ երեք տարում նա հանդես է եկել միայն երկու անգամ, բայց հետո խիստ ակտիվացել է: Դա հատկապես վերաբերում է 1892 թ., երբ համարյա բոլոր համարներում էլ նա հանդես է եկել, հրատարակելով տարվա բոլոր ամիսներին նվիրված գեղարվեստական պատկերներ:

«Աղբյուր»-ին առավել երկարատև աշխատակցած հեղինակներից պետք է թվարկել Կ. Մելիք-Գահնազարյանին, Տիգրան Հովհաննիսյանին, Ալեքսանդր Արարատյանին, Թամարա Արամյան-Ներսիսյանին, Արամ Սարգսյան-Արևշատյանին, Էդիշև Մարությանին, Սարգիս Դամալյանցին, Գալանե Հովհաննիսյան-Մատակյանին, Հար. Թումանյանին, որոնք մանկական ամսագրում հանդես էին գալիս նրա հիմնվելու օրից:

Ինչպես արդեն նշվեց, «Աղբյուր»-ի առաջին համարներին բնորոշ է ժողովուրդների բարեկամության գաղափարը: Այդ արժեքավոր գիծը ամսագիրը պահպանել է նաև հետագա տարիներին: Դա արտահայտվել է այն բանում, որ ամսագրում պարբերաբար տեղ են գրավել այլազգի հեղինակների գրվածքներ, զանազան ժողովուրդների հեքիաթներ, գրույցներ, տարբեր ցեղերի ներկայացուցիչների նկարներ, հետաքրքրական տեղեկություններ՝ շատ և շատ երկրների բնակիչների կենցաղի ու սովորությունների մասին: «Աղբյուր»-ում նյութեր կարելի է գտնել աշխարհի հայտնի մի քանի տասնյակ անձնավորությունների մասին:

«Աղբյուր»-ի աշխատակիցները հատուկ ուշադրությամբ էին վերաբերվում ռուսական գրականության լավագույն նմուշների պրոպագանդման, ռուս նշանավոր գրողների ստեղծագործությունների հիման վրա մանուկներին դաստիարակելու հարցերին: Դա, ինչպես որ պետք էր սպասել, արվում էր նպատակասլաց, խնամքով: Ռուս ժամանակակից մանկական գրողներից մեկը՝ Սոլովյով-Նևսմեյովը, դարձել էր «Աղբյուր»-ի մշտական աշխատակիցը, գրում էր հատուկ նրա համար, ակտիվորեն մասնակցում ամսագրի համարների ստեղծմանը, նույնիսկ անքուն գիշերներ անցկացնում տպարանում: Իր արտակարգ հոգատարությամբ համար նա ստացել էր «Աղբյուր»-ի դաշակ» անունը: Ամսագրի առաջին իսկ համարներից նա օգնեց խմբագրությունը կապ պահպանելու ժամանակակից ռուսական մանկական ամսագրերի հետ, «Աղբյուր»-ի հա-

մար նկարներ, նյութեր էր որոնում: Ռուս հայտնի գրողներից «Աղբյուր»-ը թարգմանել և տպագրել է Տուրգենևին, Կռիլովին, Լերմոնտովին, Պուշկինին, Տոլստոյին, Գորկուն, Գ. Ուսպենսկուն, Գարշինին, Չեխովին, Մամին Սիրի-յակին և ուրիշներ: Առանձին հեղինակների գործերի տպագրության հետ միա-սին, ամսագիրը հաճախակի իր էջերում տեղ էր առնում նաև ռուս ժողովրդի նշանավոր ներկայացուցիչների կյանքի և գործունեության մասին նյութերին: Ամսագրում տպագրվել են բազմաթիվ ռուսական ժողովրդական հեքիաթներ ու զրույցներ: Դրանց գլխավոր նպատակը համահնչյուն է ամսագրի նպատակ-ների հետ:

Ճիշտ բմբռնելով մանուկներին ժողովուրդների բարեկամության ոգով դաստիարակելու նշանակությունը, «Աղբյուր»-ը պարբերաբար տպագրում էր նաև մյուս ազգերի ճանաչված գրողների ստեղծագործությունները, իր ըն-թերցողներին պատմում նշանավոր մարդկանց մասին: Ահա օտարազգի այն գրողների ոչ լրիվ ցանկը, որոնց ստեղծագործությունները թարգմանաբար տեղ են գտել «Աղբյուր»-ում. Անդերսեն, Էմիլ Զոյա, Հոֆման, Մոպսսան, Վ. Հյուգո, Լև. Դոդե, Հայնե, Նիլսեն, Չարլզ Դիկենս, Գյոթե, Ժ. Մանդ:

«Աղբյուր»-ի ընդգրկած շրջանակների մասին լայն պատկերացում կարող է տալ նաև այն նշանավոր անձնավորությունների ցանկը, որոնց կյանքն ու գործունեությունը այս կամ այն առիթով լուսարանվել է ամսագրի էջերում: Ըստ որում նկատենք, որ այդ արվում էր վարպետությամբ: Մի դեպքում տպա-գրվում էին նշանավոր անձնավորությունների կենսագրությունները, մյուս դեպ-քում նկարագրվում էր որևէ էպիզոդ նրանց կյանքից, երրորդ դեպքում նրանց մասին հրապարակվում էր հիշողություն կամ ակնարկ, չորրորդ դեպքում ըն-թերցողները պարզապես ծանոթանում էին նրանց ինքնակենսագրությանը: «Աղբյուր»-ն իր մանուկ ընթերցողներին պատմել է Մոցարտի, Ժաննա դը Արկի, Ռուբինշտեյնի, Գյոթեի, Գուտենբերգի, Արիստոտելի, Գալիլեյի, Ժու-կովսկու, Ջուլիի, Բեթհովենի, Դիկենսի, Ռուբենսի, Հայնեի, Նիլսենի, Լիստի, Ժյուլ Վեռնի, Ռաֆայելի և ուրիշների մասին:

Ի՞նչ նպատակ էր հետապնդում խմբագրությունը նշանավոր մարդկանց մասին նյութեր տպագրելիս: Այս հարցի պատասխանը պարզությամբ տալիս է հենց ամսագիրը: «Տե՛ս,—գրում է «Աղբյուր»-ի աշխատակից Գարբիել Միր-զոյանը «Իմ նամակները» հոդվածում,—թե որպես են ներգործում մանուկ-ների վրա մեծ մարդկանց կենսագրությունները, տե՛ս ինչպես են փայլում ունկնդիրների դիմացի աչքերը, երբ այս կամ այն մեծ մարդու կյանքը պատ-մելիս, դու նրանց ականքն ցույց ես տալիս, որ հերոսը իր սևեփական ուժե-րով է հաղթահարում բոլոր արգելքներին»²⁰:

«Աղբյուր»-ն իր ընթերցողներին լայնորեն ծանոթացնում է նաև մյուս ժողովուրդների բանահյուսության նմուշների հետ: Նրանում մասնավորապես տպագրվել են շինական, անգլիական, ճապոնական, պարսկական, գերմանական, շվեդական, լեհական, արաբական և այլ ժողովրդական հեքիաթներ ու զրույցներ:

Դժվար է գերադնահատել այդ ամենի նշանակությունը հայ մանուկների դաստիարակության, գեղարվեստական ճաշակի զարգացման, նրանց ժողո-վրդասիրության ոգով դաստիարակելու, դեպի մյուս սղգերը նրանց մեջ սեր

²⁰ «Աղբյուր», 1883, հավելված № 1, էջ 6:

պատվաստելու տեսակետից: Այդ նյութերը միաժամանակ ընդլայնում էին մանուկների մտահորիզոնը:

«Աղբյուր»-ի հրատարակումը կապված էր լուրջ դժվարությունների հետ: Մանկական ամսագիրն ունեցել է իր հակառակորդները, որոնք ձգտում էին խափանել նրա հրատարակումը, վատ լուրեր էին տարածում նրա մասին: «Աղբյուր»-ի լույս ընծայմանը, նրա առանձին նյութերի տպագրությունը խոչընդոտում էր ցարական գրաքննությունը:

Հենց առաջին տարում առանձին բնակավայրերում «Աղբյուր»-ի շուրջը որոշ անառողջ միջնորդներ էր ստեղծվել: Մի շարք տեղերում, օրինակ, Նախիջևանում, լուրեր են տարածվել, թե ուր որ է ամսագիրը պետք է փակվի, ցամաքի: Հետագա տարիներին այդպիսի տրամադրություններին տուրք են տվել նաև տպագիր առանձին օրգաններ, իսկ «Առձագանք» թերթը կանգ չի առել ամսագրի խմբագիր-հրատարակչին անձնական վերավորանքներ հասցրնելու առաջ՝ նրա մասին գրելով, թե «որևէ հոգևած գրելու կարողություն չունի», թե նրա «միակ հատկանիշը ճարպկությունն է»:

«Աղբյուր»-ի հակառակորդները չեն բավարարվել անձնական մեղադրանքներ ներկայացնելով: «Աղբյուր»-ի երկրորդ տարում նրա ուղղությունը դիտվել է իբրև «փնասակար»:²¹ Հաջորդ տարում «Նոր-Դար»-ի խմբագիր Ս. Սպանդարյանը հատուկ ելույթ է ունեցել «Աղբյուր»-ի և նրա խմբագրի դեմ: Անդրադառնալով այդ ելույթին, «Աղբյուր»-ը զայրույթով գրում է, թե «ուղղակի ասացեք էլի՜, որ «Աղբյուր»-ի խմբագրությունը կազմված է գաղտնի գործիչներից...»²²: «Աղբյուր»-ի հակառակորդները, ավելի կոնկրետացնելով իրենց մեղադրանքը, ակնարկել են այն մասին, թե իբրև Վաֆֆին անարդարական մտքեր է քարոզում, Նեսմելովը՝ նույնպես: Առանձին դեպքերում «Աղբյուր»-ի նկատմամբ ռեպրեսիաներ էին կիրառում կրոնական իշխանությունները: 1889 թ. առաջին համալում Ղ. Աղայանի ստորագրությամբ տպագրված հոդվածի մի ակնարկի համար Մակար կաթողիկոսը առաջարկեց դպրոցներին և եկեղեցականներին չստանալ «Աղբյուր»-ը, արգելք լինել նրա տարածմանը: Բայց մանկական ամսագիրը անվարան էր, չէր հրաժարվում իր ընտրած ուղղությունից: «Շարունակեցեք»,—դիմելով իր հակառակորդներին, գրում է «Աղբյուր»-ը,—մենք մեր գործը ճանաչում ենք մեր հասկացածի չափով և ձեր վարմունքը «Աղբյուր»-ի վերաբերմամբ մեզ համար շատ հեշտ բացատրելի է...»²³:

«Մեզ համար,—գրում է մի ալ տեղ «Աղբյուր»-ը,—բոլորովին միևնույն է, թե ինչպես են վերաբերվում դեպի մեզ կիսաշունչ դիակներ, մենք ապրում ենք և մեր կարողացածի չափ գործում՝ զլխավորապես նորաբողոք սերունդի համար»²⁴: Հակառակ ամեն տեսակ խոչընդոտների և հարուցված հալածանքների, ամսագիրը լայն տարածում էր գտնում: Առաջին տարվա վերջում «Աղբյուր»-ն արդեն տարածվել էր 109 հայաքանակ վայրերում: 1886 թ. նրա բաժանորդների թիվը հասավ 1060-ի, իսկ 1888 թ.՝ 1500-ի: Այդ տարվա առանձին համարներ տարածվեցին ավելի քան 1700 օրինակ տպաքանակով: «Աղբյուր»-ի հրատարակման դեմ հարուցված գրաքննական արգելքների

²¹ Ն ու յ ն տ ե դ ու մ, 1885, հավելված № 1:

²² Ն ու յ ն տ ե դ ու մ, 1884, հավելված № 3, էջ 22:

²³ Ն ու յ ն տ ե դ ու մ, 1884, հավելված № 12, էջ 42:

մասին տողամեջ և բացահայտ ակնարկներ կան հենց «Աղբյուր»-ում: Գրաքննիչի դեմ ուղղված ակնարկ է թվում, օրինակ, ամսագրի հենց առաջին համարի հավելվածում տպագրված նամակի հետդրույթունը, ուր ասված է.

«Բայց գիտես, բարեկամս, թե ինչ դժբախտություն է եկել գլխիս. իմ բիձա Հակոբը վերադարձել է քաղաքից և այժմ ինձ մոտ է ապրում: Անտանի ընտանիքում է ստացել այս պառաւիլը. հենց տեսնում է, որ ես գրիչս ձեռքս եմ առնում, իսկույն դալիս է նստում կողքիս մինչև գրածս չկարդա, չի կարողանում հանգստանալ և գիտես այն օրը ինչ օջին խաղաց գլխիս. մի նամակ էի գրել քեզ, բայց հենց ես տանից դուրս էի գնացել, նա գտել էր այդ նամակը, ծայրն է ծայր կարդացել էր ու... ու պատռել: Ես ստիպվեցա նստել ու նորից գրել. շատ բան, ինչ առաջ էի գրել, էլ չկարողացա հիշել»²⁴:

Ամենայն հավանականությամբ այս համարում տպագրված նամակը, որը խոսում է մանկական գրականության զարգացման ու նրա թերությունների մասին, գրաքննության կողմից արգելվել ու նորից է գրվել:

«Աղբյուր»-ում եղած մի շարք նյութերից որոշակիորեն պարզ է դառնում, որ ամսագիրը պարբերաբար հանդիպել է գրաքննական արգելքների: 1917 թ. 3—6-ում տեղավորված փոքրիկ խմբագրականում Տ. Նազարյանը գրաքննական արգելքների դեմ մղված տարիների պայքարը բնորոշում է «կսկիծ ու քրքիշ» արտահայտություններով, և ապա պատմում 1887 թ. ամսագրի գրաքննիչի հետ պատահած մի փոքրիկ կուրյուզ». գրաքննիչը պնդել է, թե պետք է գրել ոչ թե «կաթի փոխարեն չոր խոտ ևն արածում», այլ «չորի» տեղ գրել «կանաչ»: Խմբագրի առարկություններին ի պատասխան գրաքննիչը սպառնաց, թե ամբողջ հոգվածը կջնջի: Կոնֆլիկտն ավարտվել է նրանով, որ ոչ «չոր» է գրվել, ոչ էլ «կանաչ»: Շեման հազար անգամ հոր կուրյուզներ ևնք ունեցել այս 35 տարվա ընթացքում»,—եզրափակում է Տ. Նազարյանը:

«Աղբյուր»-ի դեմ քիչ արգելքներ չի հարուցել ցարական ժանդարմ Գուլիցինը, որը արգելել է ամսագրի երկրորդ բաժինը և կրճատել «Աղբյուր»-ի ծրագիրը: 1914 թ. լույս ընծայած իր գրքույկում Տ. Նազարյանը, մատնանշելով «գուլիցինյան էպոխան», ընդգծում է, որ «...ռուսական այն ժամանակվա կառավարությունը, ի դեմս իր գրաքննական ատյանի, համարյա քար ու երկաթ էր մաղում և մեր գլխին»²⁵: Գրաքննական ատյանի ճքար ու երկաթ-ի պատճառով «գառն ու արյուն արտասուք» տեսած խմբագիր-հրատարակիչը, դիմելով ընթերցողին, կոչ է անում. «Թերթել պետք է Թիֆլիսի գրաքննական ատյանի և Պետերբուրգում մամուլի գլխավոր վարչության արխիվները, որպեսզի ունենի լինեն տասնյակ տարիներ մեր քաջած դաժան, համառ պայքարն ու վիշտը»²⁶:

Արխիվային որոշ փաստաթղթեր իրոք վկայում են այդ պայքարի մասին: Մենք նկատի ունենք այն փաստաթղթերը, որոնք պահպանվում են Տ. Նազարյանի հրատարակությունների ժամանակավոր խմբագիրներից մեկի՝ Ստ.Լիսիցյանի, արխիվում²⁷: «Աղբյուր»-ի, «Տարագ»-ի, ինչպես նաև «Анонс»-ի

²⁴ Ն ու յ ն տ ե գ ու մ, 1883, հավելված № 1, էջ 9:

²⁵ Տ. Ն ա գ ա Ր յ ա ն, Խոսք և գործ, 1914, էջ 5:

²⁶ Ն ու յ ն տ ե գ ու մ, էջ 5:

²⁷ Օգտագործելով առիթը, մենք շնորհակալություն խոսք ենք հղում հանդուցյալի գտներ՝ Սրբուհի Լիսիցյանին, այն սիրահոժարության համար, որով նա մեղ տրամադրեց մի շարք փաստաթղթեր:

ժամանակավոր հրատարակիչները բավական մեծ ջանքեր են գործադրել, որպեսզի կարողանան ընդարձակել այդ հրատարակությունների ծրագիրը, բայց ապարդյուն: Ներքին գործերի մինիստրության Կովկասյան գրաքննության կոմիտեն շարունակ մերժել է խմբագիր-հրատարակիչների խնդիրքները: Կոմիտեն 1892 թ. դեկտեմբերի 12-ի գրությամբ կտրականապես առաջարկում է «Աղբյուր»-ի և «Տարագ»-ի ժամանակավոր խմբագիր Լիսիցյանին. «Принять надлежащие меры к безусловному прекращению на будущее время в редактируемом Вами журнале уклонений от утвержденной программы...»: Կոմիտեն զրուցացնում է, որ ծրագրով չնախատեսված նյութերը չոչ մի պայմանով չեն կարող գրաքննության կողմից թույլատրվել տպագրության:

Հիշյալ արխիվի, և հատկապես Երիվանի պետական արխիվի մի շարք փաստաթղթեր վկայում են այն մասին, որ գրաքննական կոմիտեն արգելել է բազմաթիվ հոգվածների տպագրությունը:

Ահա ինչ դժվարությունների գնով էր հրատարակվում մանկական ամսագիրը: «Աղբյուր»-ի նշանակությունը, նախ և առաջ, մանկական գրականության զարգացման գործում նրա կատարած դերի մեջ է: Այդ դերը, իրոք որ, խոշոր է: Հանդես գալով մի այնպիսի ժամանակաշրջանում, երբ դեռևս որոշակի տարրերով չկար ընդհանուր գրականության և մանկական գրականության միջև, «Աղբյուր»-ը մի տեսակ բաժանման գիծ անցկացրեց այն գործերի միջև, որոնք գրվում են մեծահասակների համար և այն գործերի միջև, որոնք գրվում են մանուկների համար: Նա բավականաչափ երկար ժամանակ հանդիսացավ այն միակ ասպարեզը, որ կարող էին հանդես գալ մանուկների համար գրող թե՛ ճանաչված, թե՛ դեռևս սկսնակ գրողներն ու բանաստեղծները: «Աղբյուր»-ը դարձել էր մի յուրօրինակ գրական կենտրոն, որի շուրջն էին համախմբվում գրական ուժերը:

«Աղբյուր»-ին ընթերցողները անհամբերությամբ էին սպասում: Նա դարձել էր մանուկների համար մի դպրոց, բարեկամ, խորհրդատու: «Աղբյուր»-ը սիրով էին կարդում նաև մեծահասակները՝ պապիկներն ու տատիկները: Երբեմն հալ ընտանիքները կազմակերպում էին ընթերցանության հատուկ երեկոներ և կոլեկտիվ կերպով ունենդրում ամսագրում տպագրված որևէ պատմվածք, բանաստեղծություն կամ այլ նյութ: «Աղբյուր»-ի վալեյած ժողովրդականության մասին է վկայում ոչ միայն նրա տիրաժը (առանձին տարիներին մինչև 1500—1600), այլ նաև այն բազմաթիվ նամակները, որոնք խմբագրությանն էին ուղարկում ամսագրի բաժանորդները, ընթերցողները: Այդ ժողովրդալոկության մասին պերճախոս վկայություն է հանդիսանում նաև այն ոգևորությունն ու համբանդանուր խանդավառությունը, որով նշվել է ամսագրի 25-ամյակը:

Մի ամբողջ պատմական ժամանակաշրջան է ընդգրկում «Աղբյուր»-ի գործունեությունը: «Աղբյուր»-ը պատկերացում է տալիս 1883—1918 թթ. մանկական գրականության զարգացման ուղիների ու ելևէջների մասին: Իրա համար էլ այդ ամսագիրը պետք է որ դառնա բազմակողմանի ուսումնասիրության առարկա, իսկ նրանում տպագրված շատ և շատ նյութեր այսօր էլ կարող են բավարարել մեր պատանի ընթերցողների բարձր պահանջները, նպաստել նրանց դաստիարակությանը: